II

ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ (1220-1222 թթ.)

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

1220-1222 թթ. մոնղոլների (թաթարների) Անդրկովկաս կատարած հետախուզական արշավանքի դեմ հայ և վրաց ժողովուրդների պայքարը նրանց գարավոր ռազմաքաղաքական համագործակցության ուշագրավ էջերից է: Նրա ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտելու պատմական ճշմարտությունը և ճիշտ հասկանալու իրադարձությունների հետագա ընթացքն ու պատճառները:

Մոնգոլագիտության մեջ վաղուց նկատված իրողություն է, որ այս կամ այն տարածքի մոնղոլական նվաճմանը, իբրև կանոն, նախորդում էր խնամքով կատարված ռազմական հետախուզությունը[1]: Դա, հետախուզական խնդիրներից բացի, զոհին թալանելու, կոտորելով թուլացնելու, սարսափի մատնելու և դրանով իսկ նրա վերջնական ընկճումը դյուրացնելու նպատակ էր հետապնդում: Այս առումով 1220-1222 թթ. մոնղոլների Անդրկովկաս կատարած հետախուզական արշավանքը բացառություն չէր և վաղուց ի վեր գանվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դա բացատրվում է ոչ միայն Անդրկովկասի ժողովուրդների կյանքում այդ արշավանքի խաղացած էական բացասական դերով, այլև աղբյուրների հաղորդումների հակասականությամբ, ինչը խանգարել է այդ ժամանակ գլխապտույտ արագությամբ միմյանց հաջորդած իրադարձությունների պատկերը ճիշտ վերարտադրելուն: Եվ դա այն դեպքում, երբ այդ արշավանքի մասին հայ-վրացական և պարսկա-արաբական աղբյուրների հաղորդումները ժլատությամբ չէ, որ աչքի են ընկնում: Բանն այն է, որ հայկական աղբյուրները, շարադրվելով այս արշավանքից տասնամյակներ անց, առանձին իրողություններ մոռացության են մատնել կամ էլ արադորեն միմյանց հաջորդած դեպքերը նույնացրել են, ինչից ժամանակագրությունը ևս խիստ տուժել է: Վրացական աղբյուրներն էլ գրված լինելով պաշտոնական պատմագրության գիրքերից կամ էլ լինելով պալատական փաստաթղթեր, իրականությունը կեղծված կամ շփոթ են ներկայացնում՝ նաև դրանցից մեկի մեկ դար հետո գրված լինելու հետևանքով: Ինչ վերաբերում է պարսկա-արաբական աղբյուրներին, ապա դրանք համեմատաբար հետևողական ու մանրամասն, ինչպես նաև վստահելի ժամանակագրությամբ են ներկայացնում իրադարձությունները: Սակայն գրանցում վրացական թագավորությունում կատարված դեպքերի աշխարհագրությունը խիստ կաղում է:

---

1 *Տե՛ս, օրինակ,* И. М. И в а н и н. О военном искусстве и завоеваниях монголо-татар и среднеазиатских народов при Чингиз-хане и Тамерлане. СПб., 1895 *և ուրիշներ:*

Ասվածն առարկայական դարձնելու միտումով համառոտակի վկայակոչենք հայ-վրացական և մոնղոլական զորքերի բախումների մասին աղբյուրների հաղորդումները: Հայկական բոլոր աղբյուրների և XIV դարի վրաց Անանուն պատմիչի վկայությամբ այս արշավանքի ժամանակ մոնղոլական և հայ-վրացական զորքերի միջև տեղի է ունեցել միայն մեկ ճակատամարտ: Սակայն այս նույն հաղորդումից հետք չի մնում, եթե հաշվի ենք առնում ճակատամարտի վայրի նրանց առաջարկած տեղադրությունը: Ռուսուդան թագուհին (1223-1245) և Իվանե աթաբեկը Հռոմի պապ Հոնորիոս III-ին 1223 թ. դրած նամակներում երկու ճակատամարտ են նշում առանց տեղը ցույց տալու[3]: Ինչ վերաբերում է Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչին, ապա նա ևս երկու ճակատամարտ է նշում՝ առաջինը Բալիի ջրի մոտ, իսկ երկրորդի տեղը չի հայտնում[4]: Նկատենք նաև, որ վրացական այս վերջին աղբյուրները ճակատամարտերից մեկի ելքի հարցում տարամիտվում են մյուս բոլոր աղբյուրների հետ՝ հայ-վրացական զորքերին հաղթանակ վերագրելով: Պարսկա-արաբական աղբյուրներից ալ-Բազդադին հիշատակում է միայն մեկ ճակատամարտ, Ռաշիդ ադ-Դինը՝ երկու, Իբն ալ-Ասիրը և Միրխոնդը՝ երեք, առանց տեղերը նշելու, իսկ Ջուվեյնին և ան-Նասիվին Անդրկովկասում մոնղոլների գործողությունները չրջանցում են[5]: Ընդ որում, բոլոր աղբյուրները երբեմն տարակարծիք են նաև ճակատամարտերի ժամանակագրության, ընթացքի, մոնղոլական զորքերի երթուղու և գործողությունների հաջորդականության հարցում:

Աղբյուրագիտական նյութի նման հակասականությունն, իր կնիքն է դրել խնդրո առարկա արշավանքին անդրադարձած հետազոտողների քննության և դրանից բխող եզրահանգումների վրա, անկախ նյութի դիտարկման խորությունից ու կտրվածքից: Այսպես, օրինակ, հարցի համակողմանի քննությամբ զբաղված հետազոտողներից Գ. Ալթունյանի կարծիքով եղել է մեկ ճակատամարտ, Հ. Մանանդյանի, Ս. Ուորքերի, Վ. Ալենի և Ռ. Գրուսեի կարծիքով՝ երկու ճակատամարտ, ըստ Լ. Բաբայանի, Մ. Դ՝Օսսոնի, Յու. Սիխարուլիձեի և Ռ. Կիկնաձեի՝ երեք ճակատամարտ[6]: Ա. Ա-

---

2 Մանր ժամանակագրություններ. հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան. Երևան, 1951, էջ 37, 38, հ. II, Երևան, 1956, էջ 137: Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ. Վենետիկ 1862, էջ 142: Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի. Պատմութիւն թաթարաց. Երուսաղեմ, 1974, էջ 20: Մխիթարայ Այրիւանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական. Ս. Պետերբուրգ, 1867, էջ 80: Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն Հայոց. Երևան, 1961, էջ 203: Վրաց ժամանակագրություն (1207—1318). Երևան, 1979, էջ 56:

3 Ի. Մ. Տ ա բ ա գ ո ւ ա. Վրաստանը Եվրոպայի արխիվներում և գրապահոցներում (XII-XVI). Թբիլիսի,1984, էջ 176-178 (վրացերեն):

4 Քարթլիս Ցխովրեբա. հ. I, Թբիլիսի, 1955, էջ 370 (վրացերեն):

5 Мацне, 1982, N 4, с. 163; Р а ш и д а д - Д и н. Сборник летописей. Т. I, кн. 2-я, М.—Л., 1952, с. 227, 228. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (այսուհետև՝ Ի բ ն ա լ - Ա ս ի ր). հ. 11, էջ 300, 301, 304: Մ ի ր Մ ու հ ա մ մ ա դ Բ ի ն Ս ե յ յ ի դ Բ ու ր հ ա ն ա լ - Դ ի ն Խ ո ն դ շ ա հ բ ե Մ ի ր խ վ ա ն դ. Թարիխ-ե Ռոուզաթ ալ-Սաֆա (պարսկերեն, այսուհետև՝ Մ ի ր - խ ո ն դ), Թեհրան, 1961: G u v a i n i A l a - a d - D i n A t a - M a l i k. The History of the World Conqueror. T. I, Manchester, 1958, p. 143–149.

6 Գ. Ա լ թ ու ն յ ա ն. Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ դարում. Վաղարշապատ, 1913, էջ 17: Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի

լի-Զադեի կարծիքով եղել է մի քանի ճակատամարտ, իսկ հարցը համապարփակ հետազոտելու փորձ կատարած Հ.Ստեփանյանի կարծիքով՝ չորս ճակատամարտ[7]: Ինչ վերաբերում է այս արշավանքին հպանցիկ անդրադարձած հետազոտողներին, ապա նրանց կարծիքները ևս տարամիտվում են մեկից-երեք ճակատամարտերի սահմաններում: Այսպես, օրինակ, Ա. Գալստյանի, Բ. Շպուլերի և Բ. Ուլուբաբյանի կարծիքով կայացել է մեկ ճակատամարտ, ըստ Ս. Աշուրբեյլիի՝ երկու, իսկ ըստ Զ. Բունիյաթովի՝ երեք և այլն[8]: Ընդ որում, հետազոտողները ճակատամարտերի տեղի, ժամանակի և իրադարձությունների հաջորդականության հարցերում ևս հաճախ տարակարծիք են: Դա բոլոր աղբյուրները չհամադրելու կամ դրանց հաղորդումները երբեմն կամայական մեկնաբանելու հետևանք է: Արդյունքում՝ մոնղոլների 1220-1222 թթ. Անդրկովկաս կատարած հետախուզական արշավանքի դեմ հայ և վրաց ժողովուրդների համատեղ պայքարի պատմությունն առ այսօր կարոտ է սպառիչ և համապարփակ լուսաբանման: Փորձենք հրապարակի վրա եղած աղբյուրների և պատմադիտության նվաճումների հաշվառմամբ հնարավորին չափ լրացնել այդ բացը[9]:

Խորեզմշահերի երբեմնի հզոր պետությունը ջախջախելիս, ավելի ստույգ՝ 1220 թ. ամռանը Սամարգանդի պաշարման ժամանակ Չինգիզ խանը իր ինը հայտնի զորավարներից երեքի՝ Ջեբե Նոյինի, Սուբադայ Բահատուրի ու Տուկուչարի գլխավորությամբ ընտիր բանակ առանձնացնելով, նրանց հրամայեց երեքամյա ժամկետում հետապնդել ու գերել մոնղոլներից դեպի արևմուտք փախչող խորեզմշահ Մուհամմադին (1200-

---

պատմության. հ. Գ, Երևան, 1952, էջ 182–185: С. С. У о р к е р. Чингиз-хан. Ростов-на-Дону, 1998, с. 163—165; W. E. D. A l l e n. A history of the Georgian people. London, 1932, p. 110; R. G r o u s s e t. L'Empire Mongol (I-re phase). Histoire du Monde, t. VIII, Paris, 1941, p. 258–259; *Ն ո ւ յ ն ի՝* L'Empire des steppes. Attila. Gengis-Khan. Tamerlan. Paris, 1960, p. 307; *Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. Հայաստանի սոցիալ- տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում. Երևան, 1964, էջ 162-180:* К. Д' О с с о н. История монголов от Чингиз-хана до Тамерлана. Т. I, Иркутск, 1937, с. 187—188, 191—192; Ю. М. С и х а р у л и д з е. Борьба грузинского народа против татаро-монгольского владычества (Автореф. дисс. на соискание ученой степени доктора ист. наук). Тбилиси, 1969, с. 17—18; *Վրասաանի պատմության ակնարկներ. հ. III, Թբիլիսի, 1979, էջ 532–536 (վրացերեն):*

7 А. А. А л и - З а д е. Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв. Баку, 1956, с. 95, 96, 99; *Հ ր ա չ Ս ա հ ա փ ա ն յ ա ն. Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ. Երևան, 1990, էջ 30-41:*

8 А. Г. Г а л с т я н. Завоевание Армении монгольскими войсками (Татаро- монголы в Азии и Европе). М., 1977, с. 167); B e t r o l d S p u l e r. Die Mongole in Iran. Berlin, 1955, S. 25; *Բ. Ա. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Խաչենի իշխանությունը X-XVI դարերում. Երևան, 1975, էջ 181-182:* R. G r o u s s e t. L'Empire mongol, p. 258-259; *Ն ո ւ յ ն ի՝* L'Empire des steps..., p. 307; G u v a i n i, t. I, p. 149, sue. 32; С а р а А ш у р б е й л и. Государство Ширваншахов (VI—XVI вв.). Баку, 1983, с. 1948; З. М. Б у н и я т о в. Государство атабеков Азербайджана (1136-1225). Баку, 1978, с. 114-118 *և ուրիշներ:*

9 *Մոնղոլական այս արշավանքին ժամանակին անդրադարձել է նաև տողերիս հեղինակը (Ա. Ի. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. Վահրամյանների իշխանությունը. Երևան, 1990, էջ 90-101)՝ կատարելով մի շարք եզրահանգումներ: Սակայն թեմայի համապարփակ քննության նպատակ չհետապնդելով, այն շոշափել ենք այնքանով, որքանով արշավանքն առնչվել է Վահրամյանների իշխանության հետ:*

1220), իրականացնել Հյուսիսային Իրանի ու Անդրկովկասի ռազմական հետախուզությունը և Դեշտի-Ղիչաղի վրայով Հյուսիսային Կովկասն անցնելով վերադառնալ Մոնղոլիա՝ գլխավոր զորական[10]: *Սակայն Տուկուչարը շուտով սպանվում է և նրա զորաբանակն անցնում է մյուս երկու զորավարների ենթակայության տակ*[11]: *Ըստ Կիրակոս Գանձակեցու, նրանից օգտված Անանուն Սերաստացու և նրանց հիմք ընդունած Մ. Չամչյանի ու Գ. Ալթունյանի, այս բանակի ընդհանուր հրամանատարը եղել է Սուբադայը*[12]: *Սակայն Ջուվեյնիի, Ռաշիդ ադ-Դինի և Արուլգազիի վկայություններից հստակ հետևում է, որ այս բանակի ընդհանուր զորահրամանատարը եղել է ավելի տարիքով ու փորձառու Ջեբեն*[13]:

Մոնղոլական այս բանակի թվաքանակի հարցում ևս աղբյուրները տարակարծիք են: Եթե ան-Նասիվին, Ջուվեյնին, Ռաշիդ ադ-Դինը, Միրխոնդն ու Արուլգազին այն 30 հազար են հաշվում, ապա Իբն ալ-Ասիրը, Վարդան վարդապետն ու նրանից օգտված Անանուն Սերաստացին՝ 20 հազար, իսկ XIV դարի վրաց Անանուն պատմիչը՝ 12 հազար[14]: *Եթե նկատի ունենանք այն հանրահայտ իրողությունը, որ մոնղոլական ռազմարվեստի կանոնների համաձայն յուրաքանչյուր հայտնի զորավար մեկ թումանի, այսինքն 10 հազարանոց զորք էր ղեկավարում, ապա այս բանակի թվաքանակը պետք է 30 հազար կազմեր: Սակայն, քանի որ ռազմական գործողությունների ընթացքում այն կորուստներ էր կրում և թիկունքից կտրված լինելով չէր համալրվում, ինչպես նաև հպատակեցված շրջաններում ու բնակավայրերում մոնղոլներն այս բանակից մանր ջոկատներ էին թողնում, պետք է առավել հավաստի համարել այս իրադարձությունների ականատես և ավելի մանրամասն ու ստույգ տեղեկություններ հաղորդող Իբն ալ-Ասիրի, ինչպես նաև Վարդան վարդապետի հայտնած 20 հազար թիվը, ինչը պնդել է տալիս նաև վերջինիս «իբրև թէ 20 հազար»*[15] *արտահայտության ընդգծված հատվածը: Ինչ վերաբերում է XIV դարի վրաց Անանուն պատմիչի հաղորդած 12 հազար թվաքանակին, ապա այն հավատ չի ներշնչում, որովհետև նա այս իրադարձությունները խիստ շփոթ է ներկայացնում, խառնելով Ջալալ ադ-Դինի՝ հետագայում կատարված արշա-*

---

10 Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 208-209, 217; Шихаб ад-Дин Мухаммад ан-Насиви. Жизнеописание султана Джалал ад-Дин Манкбурны. Баку, 1973, с. 89, 96—97; *Միրխոնդ, էջ 95:*

11 Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 220. *Միրխոնդ, էջ 95:*

12 *Կիրակոս Գանձակեցի, էջ 204: Մանր ժամանակագրություններ. հ. II, էջ 137, 138: Միքայել Չամչեան. Հայոց պատմութիւն. հ. Գ. Վենետիկ, 1786, էջ 201: Գ. Ալթունյան. նշվ. աշխ., էջ 18, 19, 49:*

13 В. Т. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. Т. II, М.—Л., 1941, с. 21, 30. Абулгази-багатур-хан. Родословная история о татарах. Т. I, СПб., 1768, с. 377.

14 ан—Насиви, с. 89; Guvaini, t. I, p. 113, Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 209, *Միրխոնդ, էջ 95:* В. Т. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. Т. I, СПб., 1884, с. 11. *Վարդան վարդապետ, էջ 142: Մանր ժամանակագրություններ. հ. II, էջ 137: Վրաց ժամանակագրություն (1207-1318), էջ 55:*

15 *Վարդան վարդապետ, էջ 142:*

վանքների հետ կապված դեպքերին: Կիրակոս Գանձակեցին իր հերթին մոնղոլական զորաբանակի թվաքանակը ներկայացնելիս բավարարվում է «յոլով գունդս» արտահայտությամբ[16]:

Զինդիզ խանի հրաման ստանալուց հետո Ջեբեն ու Սուբադայը սկսում են կրնկակոխ հետապնդել հուսալքված ու սարսափահար ե դրանով իսկ հպատակների շրջանում խուճապ ներշնչելով մոնղոլներից գլխապատառ դեպի արեմուտք փախչող խորեզմշահ Մուհամմադին: Այդ ընթացքում նրանք գլխովին ջախջախում են խորեզմշահի իրենց դիմադրելու փորձ կատարած որդիներին: Մերվի մոտ Ջեբեն ու Սուբադայը տեղեկանում են, որ խորեզմշահ Մուհամմադն ըստ էության լքված վիճակում կսկիծից ու թոքամիզի բորբոքումից 1220 թ. դեկտեմբերի սկզբներին Կասպից ծովի Աբեսկուն կղզում վախճանվել է[17]: Նրանք այդ մասին անհապազ հաղորդում են Զինդիզ խանին, միաժամանակ նշելով, որ Մուհամմադի որդի Ջալալ ադ-Դինը փախել է[18]: Զինդիզ խանն այդ լուրն առնելուն պես «Ջեբեյին ու Սուբադային....ուղարկեց....նվաճելու սուլթանի տիրույթները, որոնք բաղկացած էին Առանից (Աղվանքից–Ա. Շ.), Ադրբեջանից, Իրաքից ու Շիրվանից»[19]: Նույնն է հաղորդում Գրիգոր Ակներցին, որը մոնղոլների կողմից խորեզմշահերի պետության ջախջախման մասին պատմելուց հետո ավելացնում է. «Ի վերայ այսր ամենի դարձեալ հրաման առին ի զանեն յուրեանց, որ կոչեցավ Զանգզ Խան, եւ յարձակեցան ի վերայ յաշխարհին Աղուանից ե Վրաց»[20]: Զինդիզ խանը Աղվանքը, Ադրբեջանը, պարսկական Իրաքն ու Շիրվանը խորեզմշահ Մուհամմադի տիրույթները համարելու իրավական հիմքեր ուներ: Բանն այն է, որ Գանձակի Էլտկուզյան վերջին աթաբեկ թուլամորթ ու հարբեցող Ուզբեկը (1210-1225) չկարողանալով իր տիրույթները պաշտպանել հայ-վրացական զորքերի դնալով սաստկացող ոտնձգություններից, 1217 թ. ընդունել էր Մուհամմադի գերիշխանությունը[21]: Ուստիե դրան տեղյակ Զինգիզ խանն Ուզբեկի տիրույթները դիտում էր ոչ թե չեզոք, այլ թշնամական տարածք:

Ջեբեն ու Սուբադայը 1220 թ. դեկտեմբերի առաջին կեսին ներխուժում են պարսկական Իրաք ու Ատրպատական: Խորեզմյան բանակի բաբոյալքված մնացորդներին ոչնչացնելուց բացի, մոնղոլները մահ, ավերածություն ու կողոպուտ սփռելով գրավում ու կործանում են իրենց ճանապարհին ընկած մեծ ու փոքր բնակավայրերը, աննշան բացառությամբ,

---

16 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 201: Գ. Ալթունյանն այս զորաբանակի թվաքանակը ամենաշատը 20-25 հազար հաշվելով, իրավացիորեն նկատել է, որ դրանից մեծ բանակը դժվար թե կարողանար այդպիսի արագ ու ծանր երթեր կատարել (Գ. Ա լ թ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 18): Հ. Մանանդյանը ևս գտնում է, որ այս զորաբանակի թիվը մոտ 20 հազար է եղել (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 181):

17 Р а ш и д а д - Д и н. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 226, а н - Н а с и в и, с. 92-93.

18 Р а ш и д а д - Д и н. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 226.

19 Նույն տեղում:

20 Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի, էջ 20:

21 а н - Н а с и в и, с. 61.

մեծ փրկագնի դիմաց խնայելով իրենց հպատակվածներին[22]: Երբ ձմեռը մտավ իր իրավունքների մեջ, մոնղոլները գտնվում էին Ռեյի մերձակայքում՝ Խեյլ ի-բազուրգում: Ասպատակ սփռելով, նրանք այստեղից շարժվում են Թավրիզ: Աթաբեկ Ուզբեկը մոնղոլներին դիմադրելու փոխարեն գերադասում է քաղաքը կործանումից զերծ պահել նրանց հետ փրկագնով լեզու գտնելով, և Թավրիզն առժամանակ փրկվում է[23]:

Պարսկա-արաբական բոլոր աղբյուրների համերաշխ վկայությամբ 1220-1221 թթ. ձմեռը խիստ ձյունաշատ ու ցրտաշունչ է եղել: Այդ հանգամանքը Ջեբեյին և Սուբադային ստիպում է շարժվել դեպի Աղվանք, որտեղ ձմեռելու պայմանները մեղմ կլիմայի և փարթամ արոտավայրերի շնորհիվ անհամեմատ նպաստավոր էին: Այդ մասին Ռաշիդ ադ-Դինն ըստ Օ. Սմիռնովայի ռուսերեն թարգմանության հետևյալն է գրում. «Շարժվեցին Առան, որպեսզի այնտեղ ձմեռեն: Նրանց ճանապարհն անցնում էր Գյուրջիստանի [Վրաստանի] վրայով»[24]: Սակայն Ռաշիդ ադ-Դինի աշխատության Վ.Տիզենհաուզենի ռուսերեն տեքստում այս հատվածի վերջին նախադասությունը թարգմանված է հետևյալ կերպ. «Նրանց ճանապարհն անցնում էր Վրաստանի ծայրամասով»[25]: Ռաշիդ ադ-Դինի բնագրին հարազատ է Վ. Տիզենհաուզենի թարգմանությունը, որովհետև Օ. Սմիռնովայի թարգմանության այդ հատվածում երկու նախադասություն հետո նշվում է, որ մոնղոլները «Վրաստանի սահմաններում տեսան դժվարանցանելի թավուտ անտառներ և անտառային ճանապարհներ»[26]: Այս նախադասությունը Վ. Տիզենհաուզենի թարգմանության մեջ հետևյալ տեսքն ունի. մոնղոլները «տեսան, որ Վրաստանում նեղ ճանապարհներ և դժվարանցանելի տեղեր են»[27]: Այսպիսով, ըստ Ռաշիդ ադ-Դինի, մոնղոլներին Թավրիզի շրջակայքից Աղվանք տանող ուղին անցել է վրացական թագավորության սահմաններով, պարզ է հարավ-արևելյան: Ջուվեյնին իր հերթին հետևյալն է հաղորդում. «Երբ ձմեռը եկավ, նրանք (մոնղոլները – Ա. Շ.)շարժվեցին Մուղան, ձմեռն անցկացրին այնտեղ և այդ տարի ճանապարհները փակված էին մեծ քանակությամբ ձյունով»[28]: Միրխոնդը ևս հավաստում է մոնղոլների Մուղան գնալը, իսկ ան-Նասիվին այս փաստը շրջանցում է[29]: Իբն ալ-Ասիրի վկայությամբ մոնղոլները Թավրիզի շրջակայքից «հեռացան դեպի ծովի (Կասպից – Ա. Շ.) ափերը, քանի որ այնտեղ ցուրտը պակաս էր և ուզում էին ձմեռել, մա-

---

22 Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, , кн. 2-я, с. 227. *Իբն ալ-Ասիր, էջ 300:* Guvaini. t. I, p. 146-147.

23 *Իբն ալ-Ասիր, էջ 300:*

24 Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 227. *XII-XIV դդ. վրացական թագավորության կազմի մեջ մտնող բոլոր տարածքներն ու ժողովուրդները պարսկա-արաբական իրականության մեջ համապատասխանաբար ընկալվում էին իբրև Վրաստան և վրացի:*

25 В. Г. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой орды. Т. II, с. 31.

26 Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 227.

27 В. Г. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой орды. Т. II, с. 32.

28 Guvaini, t. I, p. 147.

29 *Միրխոնդ, էջ 99:*

նավանդ որ այնտեղ արոտավայրեր շատ կային իրենց կենդանիների համար»[30]: Այնուհետև նա հայտնում է, որ մոնղոլները «հասան Մուղան, ապա շեղվեցին դեպի վրաց (քուրջ) երկիրը»[31]: Այսպիսով, մոնղոլները բարենպաստ պայմաններում ձմեռելու նպատակով 1220 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին հավանաբար վերջերին, Թավրիզի մոտից դեպի Մուղան էին շարժվել: Սակայն, եթե ըստ Ռաշիդ ադ-Դինի մոնղոլները վրացական թագավորությունով անցել են Մուղան շարժվելիս, ապա համաձայն Իբն ալ-Ասիրի, նրանք այդտեղ են շարժվել Մուղան հասնելուց հետո: Կարծում ենք այս հարցում իրապատում է Ռաշիդ ադ-Դինը, նկատի ունենալով կարևոր երկու հանգամանք: Նախ, ինչու պետք է ձմեռելու նպատակով Մուղան հասած մոնղոլներն այնտեղից ռազմարշավ կատարեին դեպի վրացական թագավորություն: Եվ ապա, ցրտաշունչ ու ձյունաշատ այդ ձմռանը շտապ Մուղան հասնելու համար նրանք կընտրեին ոչ թե վրացական թագավորությունը շրջանցող Թավրիզ–Սերավ–Բաջրավան–Ջարրավան–Մուղան երկար ճանապարհը, այլ գրանից անհամեմատ կարճ և վրացական թագավորության հարավ-արևելյան ծայրամասով՝ Արցախ-Խաչենով, անցնող Թավրիզ–Ահար–Նակորզան–Բայլական–Պարտավ ճանապարհը:

Եթե Ջուվեյնին ու ան-Նասիվին գրանից հետո Անդրկովկասում մոնղոլների գործողությունների մասին լռում են, ապա Իբն ալ-Ասիրը, Ռաշիդ ադ-Դինն ու Միրխոնդը միաբերան պնդում են, որ Անդրկովկաս մտնելուց հետո նրանց դեմ դուրս է գալիս 10 հազարանոց վրացական (իմա՝ հայ-վրացական) մի զորամաս: Տեղի է ունենում ճակատամարտ, որի ընթացքում ըստ Միրխոնդի նախահարձակ հայ-վրացական ընտիր հեծելազորը մեծ կորուստներ կրելով պարտվում է[32]: Նրա մնացորդները, ոչ մի տեղ չկանգնելով, փախչում են և փրկվում[33]: Իրան նպաստեց այն, որ նրանց հետապնդելու նպատակով վրացական թագավորությունում խորանալ փորձող մոնղոլները դժվարանցանելի թավուտ անտառների ու անտառային ճանապարհների հանդիպելով հետ դարձան[34] և «ամրացուցին զաղխս իւրեանց ի մօր և ի տղմուտ տեղիս, որ կայ ի մէջ երկուց քաղաքացն՝ Պարտաւայ և Բելակունայ յամրագոյն տեղիս, զոր Բեղամէջն կոչեն»[35]:

Անդրադառնալով այս ճակատամարտին, Կ. Դ'Օսսոնը նշել է, որ Մուղանի տափաստան հասնելուց հետո մոնղոլներն անցողակի հարձակվեցին Վրաստանի վրա և ջարդեցին 10 հազարանոց վրացական զորքը[36]: Այս դեպքերը Ա. Ուորքերն այլ կերպ է մեկնաբանել, գրելով, որ մոնղոլները Մուղանից հեծյալ ջոկատներ էին ուղարկել վրացական թագավորության հովիտները՝ նպատակ ունենալով այդ երկրում ևս սարսափ տարա-

30 Իբն ալ-Ասիր, էջ 300:

31 Նույն տեղում:

32 Նույն տեղում: Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 227, Միրխոնդ, էջ 99:

33 Նույն տեղում:

34 Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 227.

35 Կիրակոս Գանձակեցի, էջ 202-203:

36 К. Д'Оссон. Ук. соч., с. 187.

ծել: Այդ ջոկատները վերադարձել էին մեծ ավարով, սպանելով մոտ 10 հազար անպաշտպան բնակչի[37]: Մինչդեռ, Ռաշիդ ադ-Դինն ու Միրխոնդը հստակ պնդում են, որ հայ-վրացական զորքը սպասել է մոնղոլներին և եղել ճակատամարտի նախահարձակը: Այլ կերպ ասած, խնդիր է ունեցել կանխել մոնղոլների հնարավոր ներխուժումը երկրի խորքը կամ նրանց հետ շպրտել պետության սահմաններից: Հետևաբար, վրաց արքունիքը տեղյակ էր մոնղոլների՝ վրացական թագավորության տարածք մտնելու հավանական վտանգի մասին և այն կանխելու ուղղությամբ համապատասխան քայլ էր կատարել: Դա պարզվում է XVII դ. վրաց հեղինակ Փարսագան Գորգիջանիձեի «Վրաստանի պատմության» մեջ օգտագործված՝ Գեորգի Լաշա թագավորի (1207-1223) XIV դարում գրված պատմության մի սկզբնաղբյուրից: Ըստ դրա, աթաբեկ Ուզբեկը Գեորգի Լաշային դեսպանի միջոցով տեղյակ է պահել մոնղոլական վտանգի մասին, նրան հորդորելով հետևյալը. «Մեզ այսուհետև պատշաճում է իրար օգնել և միմյանց թիկունք կանգնել: Բավական է այսքան ավերը, մահը և ամայացումը... Թագավորն էլ կանչեց Իվանե աթաբեկին ու այլ դիդերուլների և խորհրդակցեցին ու հավանեցին Գանձակի դեսպանի ասածին և համոզվեցին նրա խոսքերում»[38]: Ուրեմն, Զ. Բունիյաթովը սխալվում է, գրելով թե «վրաց արքունիքը, թվում է, անտեսեց այդ ուղերձը»[39]:

Եթե այս ճակատամարտի ստույգ տեղի մասին պարսկա-արաբական աղբյուրները ոչինչ չեն հաղորդում, ապա հայ-վրացական աղբյուրներն այն իսպառ մոռացության են մատնել: Որոշ հեղինակներ փորձել են ճշտել այս ճակատամարտի վայրը: Լ. Բաբայանը մեջ է բերել Կիրակոս Գանձակեցու « գալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց.... Եւ փոյթ ընդ փոյթ չոգան մինչև ի քաղաքն Տփխիս» և Ստեփաննոս եպիսկոպոսի «եկն ի Տփխեաց [տու]ննն զՍախատէ աւիրեաց և դարձաւ»[40] արտահայտությունները՝ դրանք աղերսելով քննվող ճակատամարտի հետ[41]: Իսկ նախքան այդ գրել է , որ «Մոնղոլական ջոկատն անցնելով Արաքսը, Նախիջևանի արևմտյան կողմով բարձրանում է հյուսիս, հասնում մինչև Աղստեֆի շրջանը: Այստեղ մոնղոլները հանդիպում են վրաց-հայկական 10 հազարանոց բանակին»[42]: Հետազոտողն իբրև այս խոսքերի հիմնավորում վկայակոչել է Իբն ալ-Ասիրին, Ռաշիդ ադ-Դինին, Միրխոնդին, Կիրակոս Գանձակեցուն ու Ստեփաննոս եպիսկոպոսին, որոնք, ինչպես արդեն տեսանք, նման եզրակացության և ոչ մի կռվան չեն տալիս: Ըստ երևույթին այստեղ որոշակի գեր է խաղացել Ռաշիդ ադ-Դինի բնագրի Օ. Սմիռնովայի ռուսերեն

---

37 С. С. У о р к е р. Ук. соч., с. 160, 163.

38 *Ռ ե վ ա զ Կ ի ր կ ն ա ձ ե. Եվս մեկ վրացական աղբյուր Գեորգի Լաշայի պատմության վերաբերյալ (Վրաստանը Ռուսթավելու ժամանակաշրջանում. Թբիլիսի 1966, էջ 101, վրացերեն):*

39 З. М. Б у н и я т о в. Ук. соч., с. 115.

40 *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 201-202: Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 37:*

41 *Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 170, 177:*

42 *Նույն տեղում, էջ 169: Մի քանի էջ հետո՝ 177 էջում, Լ. Բաբայանը այս ճակատամարտի տեղի մասին խոսելիս թեական է արտահայտվում՝ «պետք է ենթադրել, տեղի է ունեցել Աղստեֆի մոտ»:*

տեքստի հայերեն սխալ թարգմանությունը: Ռաշիդ ադ-Դինի ռուսերեն այդ թարգմանության 227 էջի (որը Լ. Բաբայանը 226 է նշել) մեջ հետաքրքրող հատվածի հայերեն անխաթար թարգմանությունը հետևյալն է. «Շարժվեցին Առան, որպեսզի ձմեռն այնտեղ անցկացնեն: Նրանց ճանապարհն անցնում էր Գուրջիստանով [Վրաստան]: Տաս հազար վրաց տղամարդիկ եկան [մոնղոլներին] ընդառաջ և ճակատամարտ սկսեցին: Գուրջերը [վրացիները] պարտվեցին և [նրանց] մեծ մասը կոտորվեց»[43]: Մինչդեռ, Լ. Բաբայանի թարգմանությունը հետևյալն է. «Գյուրջիստանի վրայով եկան նրանք Մուղան և ճանապարհին թեքվեցին կուրջերի երկիրը, նրանց դեմ դուրս եկավ կուրջերի մեծ քանակությամբ զորք, մոտավորապես 10 հազար...բայց կուրջերը փախուստի դիմեցին և նրանց մեծ մասը կոտորվեց»[44]: Եթե նկատի ունենանք այս թարգմանությունը և տողատակում Գյուրջիստան տերմինին Լ. Բաբայանի տված մեկնությունը՝ «Գյուրջիստան ասելով հեղինակը նկատի ունի նաև Հայաստանի հյուսիսային շրջանները»[45], ապա պարզ կդառնա, թե նա ինչու է Կիրակոս Գանձակեցու և Ստեփաննոս եպիսկոպոսի վկայություններն աղերսել այս ճակատամարտի հետ: Սակայն այս հանգամանքը ևս հիմք չի տալիս, պնդելու, որ հայ-մոնղոլական զորքերի միջև առաջին ճակատամարտը եղել է Աղստևի շրջանում: Առավել ևս, որ ըստ Ռաշիդ ադ-Դինի, դեպի Առան (Աղվանք) մոնղոլական բանակի ճանապարհն անցել է վրացական պետության արևելյան սահմանագլխով, և նրանք երկրի խորքերը չեն թափանցել:

Հ. Ստեփանյանն իր հերթին Իբն ալ-Ասիրին, Ռաշիդ ադ-Դինին, Կիրակոս Գանձակեցուն ու Վարդան վարդապետին վկայակոչելով գրել է. «Անցնելով Երասխը, Ջեբեյն ու Սուրեդեյը հասան Մուղան, որտեղից էլ շարժվեցին դեպի Պարտավ և իրենց ճանապարհը շարունակեցին Պարտավ–Գանձակ–Շամքոր–Տփղիս....ճանապարհով: Հասնելով Շամքոր...մոնղոլները քիչ անց՝ Շամքոր–Տփղիս ուղղությամբ (ստույգ վայրը չի հիշատակվում և ոչ մի աղբյուրում) շարժվելիս առաջին անդամ բախվեցին հայ-վրացական ուժերի հետ...ճակատամարտից հետո մոնղոլները Գուգարքից մտան Վրաստան, հասան Տփղիս, ապա առաջ շարժվելով և հանդիպելով թավուտ անտառների՝ վերադարձան»:[46] Նա նաև նկատում է, որ ճակատամարտի տեղի ճշտման հարցում կարող է օգտակար լինել Վարդան վարդապետի՝ մոնղոլները «եկին, մտին յերկիրն Գուգարացւոց առ դաշտավայրօքն, ի կողմանցն Աղուանից» վկայությունը, տողատակ ծանոթության մեջ հավելելով, որ մոնղոլները Գուգարք էին հասել:[47] Այսպիսով, ըստ Հ. Ստեփանյանի, հայ-վրացական և մոնղոլական զորքերի առաջին ճակատամարտը տեղի է ունեցել Գուգարքում, որտեղ մոնղոլները հասել էին Պարտավ–Տփխիս ճանապարհով: Սակայն այս եզրահանգումը ևս հակասում է նրա վկայակոչած աղբյուրներին: Իբն ալ-Ասիրն այս ճակատամարտից

---

43 Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, , кн. 2-я, с. 227.

44 Լ. Հ. Բաբայան. նշվ. աշխ., էջ 169-170:

45 Նույն տեղում, էջ 169, ծան. 3:

46 Հրաչ Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 30-32:

47 Նույն տեղում, էջ 31, ծան. 6, էջ 32, ծան. 7:

հետո մոնղոլների առաջխաղացման մասին ոչ միայն որևէ բառ չի ասում, այլև նրա շարադրանքից հստակ երևում է, որ ճակատամարտից հետո նրանք հետ էին քաշվել: Ռաշիդ ադ-Դինը ևս նման եզրակացության հիմք չի տալիս, որովհետև, ինչպես տեսանք, ըստ նրա մոնղոլները ճակատամարտից հետո փորձել են առաջ շարժվել ոչ թե Պարտավ–Տփխիս մայրուղով, այլ նեղ ու դժվարանցանելի անտառային ճանապարհներով և թավուտ անտառների են հանդիպել ոչ թե Տփխիսն անցնելուց հետո միայն, որտեղ չէին էլ հասել, այլ վրացական պետության հենց հարավ-արևելյան սահմանագլխին: Ինչ վերաբերում է Հ. Ստեփանյանի վկայակոչած մյուս աղբյուրին՝ Կիրակոս Գանձակեցուն, ապա նա մոնղոլների մուտքն Անդրկովկաս սխալմամբ Դերբենտի դռնից համարելով՝ գրում է, որ նրանք մտան Աղվանք, ապա «փոյթ ընդ փոյթ չոգան մինչև ի քաղաքն Տփխիս և դարձեալ եկին իջին յաշխարհն Աղուանից, ի սահմանս Շամքոր քաղաքի»[48]: Պատմիչի այս հաղորդումը ոչ միայն որևէ բառ չի պարունակում այն առաջին ճակատամարտի հետ աղերսելու համար, այլև նրա «չոգան մինչև ի քաղաքն Տփխիս» արտահայտությունը հուշում է, որ մոնղոլները Տփխիսը չեն անցել և որ Կիրակոս Գանձակեցին նկատի ունի նրանց այլ՝ հետագայում կատարած զորաշարժ: Ինչ վերաբերում է Վարդան վարդապետի «եկին մտին յեկիրն Գուգարացւոց առ դաշտաւայրօքն ի կողմանց Աղուանից» արտահայտությանը, ապա այն ևս հետագա իրադարձության է առնչվում, ինչը քիչ անց կտեսնենք:

Անդրադառնալով այս դեպքերին, Ռ. Կիկնաձեն գրել է. «Մոնղոլների ճանապարհն անցնում էր Արաքս գետով: Մոնղոլների դեմ ճակատամարտելու համար վրացիները դուրս բերեցին 10 հազար հոգի և պարտվեցին: Արանից հետո մոնղոլները գնացին Մուզան և ձմեռեցին»[49]: Ապա նա ավելացրել է, որ այս դեպքը պետք է նկատի ունեցած լինի Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչը՝ Բալիի ջրի վրա Գեորգի Լաշայի հապճեպ հավաքած զորքի ու մոնղոլների միջև կայացած բախման մասին խոսելիս: Այս ենթադրությունը մերժելի է, քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, Բալիի ջրի մոտ կայացած ճակատամարտը հետո է եղել[50]: Զ.Բունիյաթովն էլ այս ճակատամարտը երկրորդի հետ չփոթելով սխալմամբ տեղադրել է Տփխիսի մոտ[51]:

Ի վերջո, մոտավորապես որտե՞ղ և ե՞րբ է կայացել հայ-վրացական աղբյուրների կողմից անտեսված այս ճակատամարտը: Նախ փորձենք ճշտել ճակատամարտի մոտավոր տեղը: Իբն ալ-Ասիրի, Ռաշիդ ադ-Դինի ու Միրխոնդի պատմածներից[52] երևում է, որ այն եղել է վրացական թագավորության հարավ-արևելյան սահմանագլխին՝ սահմանից որոշ չափով ներս կամ դուրս: Հավանական է առաջին տարբերակը, քանի որ մոնղոլներին Թավրիզի շրջակայքից Մուզան տանող ամենակարճ ուղին Թավ-

48 Կիրակոս Գանձակեցի, էջ 202:

49 Վրասանի պատմության ակնարկներ. հ. III, էջ 534 (վրացերեն):

50 Նույն տեղում:

51 З. М. Буниятов. Ук. соч., с. 115.

52 Իբն ալ-Ասիր. էջ 300, Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, , кн. 2-я, с. 227, Միրխոնդ. էջ 99:

րիզ–Ահար–Նակորզան–Բայլական–Պարտավ ճանապարհն էր: Այն, արևելքից շրջանցելով Նախճավանն ու Սյունիքը, անցնում էր Արցախ-Խաչենի հարավ-արևելյան սահմանագլխով: Ճակատամարտը Սյունիքում կայացած լինելու դեպքում դժվար թե վրիպեր Ստեփաննոս Օրբելյանի տեսադաշտից[53]: Հետևաբար, մեզ մնում է պնդել, որ այն տեղի է ունեցել Արցախ–Խաչենի հարավ-արևելյան սահմանագլխում, որի տեղագրությունն ու բնական պայմանները համապատասխանում են Ռաշիդ ադ-Դինի նկարագրությանը:

Այս ճակատամարտի թվագրությունը ևս տարակարծությունների առարկա է: Ըստ Լ. Բաբայանի այն տեղի է ունեցել 1220 թ. դեկտեմբերի սկզբին[54]: Դա ընդունելի չէ, քանի որ Ջեբեն ու Սուբադայն այդ ժամանակ դեռ Մերվի մոտ էին, երբ առան խորեզմշահ Մուհհամադի մահվան լուրը: Զ. Բունիյաթովը, այս ճակատամարտը հաջորդի հետ շփոթելով, թվագրում է 1221 թ. հունվարով, իսկ Յու. Ախարուլիձեն և Հ. Ստեփանյանը՝ 1220 թ. դեկտեմբերի վերջով[55]: Քանի որ հայ-վրացական զորքերի միջև հաջորդ ճակատամարտը կայացել է 1221 թ. հունվարին[56], իսկ Մերվի մոտից մարտերով Անդրկովկաս հասնելու համար մոնղոլներից զգալի ժամանակ կպահանջվեր, տրամաբանական է պնդել, որ այս ճակատամարտը տեղի է ունեցել կամ 1220թ. դեկտեմբերի վերջին կամ, որ ավելի հավանական է, 1221 թ. հունվարի սկզբին:

Այս ճակատամարտից հետո հայ-վրացական բանակի մնացորդներին հետապնդած մոնղոլները վրացական թագավորությունում առաջանալու անհաջող փորձից հետո[57] շարժվեցին Մուղան ու բանակեցին Բեղամեջի շրջանում և ոչ թե թափանցելով վրացական թագավորության խորքերը, ասպատակեցին Սոմխիթն ու Հերեթը և Բալիի ջրի մոտ կրկին ճակատամարտ տվեցին ու հաղթեցին Գեորգի Լաշայի գլխավորած հայ-վրացական զորքերին, ինչպես անվարան պնդել է Հ. Ստեփանյանը: Ավելին, Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչին վկայակոչելով՝ նա հավելել է, թե իբր այնուհետև «մոնղոլները հետապնդեցին ու կոտորեցին նահանջող հայ-վրացական զորքերին»[58]: Իրականում Հ. Ստեփանյանի հղած էջում վրաց պատմիչը Բալիի ջրի մոտ հաղթանակը հայ-վրացական զորքերին է վերագրում, նշելով, որ նրանք մոնղոլներին «աստծո հայեցողությամբ և բարեհաճությամբ ու Գեորգի թագավորի առյուծանման վարվեցողությամբ փախուստի մատնեցին և փախչողներին կոտորեցին»[59]:

Մոնղոլներից առաջին ծանր պարտությունը կրելուց հետո վրաց արքունիքը, համոզվելով, որ իրոք գործ ունի ահեղ հակառակորդի հետ, որոշեց հետևել աթաբեկ Ուղբեկի խորհրդին և փորձեց հակամոնղոլական

---

53 *Հմմտ. Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 177:*

54 *Նույն տեղում, էջ 170:*

55 З. М. Б у н и я т о в. Ук. соч., с. 115, Ю. М. С и х а р у л и д з е. Ук. соч., с. 16. *Հ р а չ Ս տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 301:*

56 *Ի բ ն ա լ - Ա ս ի ր, էջ 301:*

57 Р а ш и д а д - Д и н. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 227.

58 *Քարթլիս ցխովրեբա. հ. I, էջ 370 (վրացերեն): Հ р а չ Ս տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 32:*

59 *Քարթլիս ցխովրեբա. հ. I, էջ 370 (վրացերեն):*

դաշինք կնքել իր երեկվա թշնամիների հետ: Այդ նպատակով վրաց արքունիքը բանակցեց Գանձակի աթաբեկ Ուզբեկի և Խլաթի ու Ջաղիրայի տեր ալ-Մալիք-ալ-Աշրաֆի հետ: Վրաց արքունական դեսպանները համապատասխան նամակով ալ-Աշրաֆի մոտ են հասնում այն ժամանակ, երբ նա պատրաստվում էր արշավել Դիամիաթը գրաված և Եգիպտոսին անմիջական վտանգ սպառնացող խաչակիրների դեմ: Չնայած վրաց արքունիքն ալ-Աշրաֆից պահանջում էր անձամբ և զորքով իրենց օգնել հետ մղելու մոնղոլներին, սպառնալով հակառակ դեպքում ընդդեմ նրա միանալ վերջիններիս, ալ-Աշրաֆը գերադասում է չարժվել այդ պահին իրական վտանգ ներկայացնող խաչակիրների դեմ, առավել ևս, որ մոնղոլ-ները, ի տարբերություն խաչակիրների, նվաճողական ծրագրեր չունեին: Բայց քանի որ վրաց արքունիքի սպառնալիքն ու մոնղոլական վտանգը ևս անտեսել չէր կարելի, ալ-Աշրաֆը դեսպաններին հայտնում է, որ անհրաժեշտության դեպքում կարող են դիմել հենց նոր (1221 թ. սկզբին) իր կողմից Խլաթի կառավարիչ նշանակված եղբորը՝ Շիհաբ ալ-Դին Ղազիին, և նա զորքով օգնության կհասնի: Ալ-Աշրաֆից փաստական մերժում ստանալուց հետո Գեորգի Լաշան և Ուզբեկը, համաձայնության գալով, որոշում են մոնղոլների դեմ հանդես գալ 1221 թ. գարնանը, ենթադրելով, որ վերջիններս ձմռանն ակտիվ քայլերի չեն դիմի[60]: Սակայն տեղի է ունենում հակառակը: Հավանաբար մոնղոլներին այս ամենը հայտնի է դառնում և նրանք, նախահարձակ լինելով, 1221 թ. հունվարի երկրորդ կեսին ներխուժում են վրացական թագավորության սահման-ները: Մոնղոլները գրանով ոչ միայն խանգարում են իրենց գեմ միացյալ հզոր ուժի հանդես գալուն, այլև գլխավոր հակառակորդ վրացական թագավորությանը հանկարծակիի են բերում: Վերջինիս վիճակն ավելի է ծանրանում նաև նրանով, որ մոնղոլներն իրենք են զգալի ուժ ներկա-յացնող դաշնակից ձեռք բերում: Իբրև այսպիսին հանդես է գալիս աթա-բեկ Ուզբեկի թյուրք մամլուք և Աղվանքում նրա տեղապահ Ակուշը, որն իր ծառայությունն է առաջարկում մոնղոլներին թուրքմեններից, քրդերից, խալաջներից և մահմեդական այլ ցեղերից հավաքագրված զորքով[61]: Ակուշի զորքն ընթանում էր մոնղոլների առջևից, և նրանք հանկարծակիության գործոնն օգտագործելով ասպատակ սփռելով հաս-նում են Տփխիսի մատույցները[62]:

Հայ-վրացական աղբյուրները լռում են Ակուշի հետ կապված դեպքերի մասին: Ըստ Վարդան վարդապետի մոնղոլները «եկին մտին յերկիրն Գուգարացւոց առ դաշտաւայրօքն ի կողմանցն Աղուանից...և կոտորէին զամենայն կենդանի, զորս գտանէին», իսկ համաձայն Կիրակոս Գանձակեցու, «զոր ինչ գտանեին ի ճանապարհին զամենեսեան սրոյ

60 Իբն ալ-Ասիր, էջ 300, 306, 307: Միրխոնդ, էջ 99:

61 Նույն տեղում: Զ. Բունիյաթովը (З. М. Буниятов. Ук. соч., с. 115) և Հ. Ստեփանյանը (Հրաչ Ստեփանյան. Նշվ. աշխ., էջ 31) ենթադրում են, որ հենց Ակուշն է մոնղոլներին հայտնել վերոհիշյալ բանակցությունների մասին:

62 Իբն ալ-Ասիր, էջ 300-301: Միրխոնդ, էջ 99: Մանր ժամանակա-գրություններ. հ. I, էջ 37:

ճարակ տային...եւ փոյթ ընդ փոյթ չոգան մինչև ի քաղաքն Տփխիս»[63]: XIV դարի վրաց Անանուն պատմիչի վկայությամբ մոնղոլները «հասան Վրաստանի սահմաններին, սկսեցին ասպատակել Գագի երկիրը»[64], այսինքն Վահրամյանների իշխանությունը: Եվ իսկապես, Պարտավի ու Բելուկանի միջև գտնվող Բեղամեջում բանակած մոնղոլները և Ակուշի զորքը ձյունաշատ այդ ձմռանը վրացական թագավորության խորքերը կարող էին թափանցել միայն Վահրամյանների իշխանության տարածքի մեջ մտնող Կուրի աջակողմյան գաշտավայրով, որտեղով ձգվում էր Պարտավ–Տփխիս մայրուղին: Ընդ որում, հակառակորդին անակնկալի բերելու միտումով, նրանք շրջանցել էին իրենց ուղու վրա ընկած քաղաքները և գրանք առժամանակ ղերծ էին մնացել ավերվելուց: Վահրամյան իշխան Վահրամ Գտգեցին իբրև սահմանապահ կուսակալ պարտավոր էր հետ մղել հակառակորդին: Սակայն դա նրան չէր հաջողվել և մոնղոլական բանակն ու Ակուշի զորքը Վահրամյանների տիրույթներն ավերելով հասել էին նրանց իշխանության արևմտյան սահմանագլուխը[65], անգամ Տփխիսի մատույցները՝ գրավելով ու ավերելով Տփխիսին հարավարևելքից մերձակա Սախոտե բերդը: Վերջինիս գրավումն ու ավերումը հանվանե արձանագրում է Ստեփաննոս եպիսկոպոսը, իսկ Իբն ալ-Ասիրը, Սախոտեի անվանումը չտալով, նշում է, որ «գրավեցին նրանց բերդերից մեկը»[66]: Համոզվելով, որ սեփական ուժերով թշնամուն հետ մղել չի կարող, Վահրամ Գադեցին Իվանե աթաբեկի հետ Գեորգի Լաշային տեղեկացնում է «Սոմխիթն ավերելու եկած, անծանոթ լեզվով խոսող օտար ցեղերի մասին»[67]: Թշնամու՝ Սոմխիթ մտնելն ու ասպատակելը փաստում է նաև Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչը, հավելելով նաև Հերեթը[68]:

Գեորգի Լաշան ըստ XIV դարի վրաց Անանուն պատմիչի՝ 90 հազարանոց, իսկ համաձայն Գրիգոր Ակներցու՝ 60 հազարանոց զորքով շարժվում է հակառակորդին ընդառաջ[69], որն ըստ երևույթին լսելով իր դեմ հայ-վրացական զորքերի շարժվելու մասին՝ շտապ նահանջում է[70]: Դա, անկասկած, Ակուշի բանակն էր, որը վրացական թագավորություն էր ներխուժել «թաթարների զորքի առջևից»[71] և որը, ինչպես ճիշտ նկատել է Ս. Ուորքերը, անընդհատ անհանգստացնում էր հայ-վրացական բանակին և խոշոր բախումից խուսափելով և նրան զորաշարժերով հոգնեցնելով

63 Վարդան վարդապետ, էջ 142: Կիրակոս Գանձակեցի, էջ 202:

64 Վրաց ժամանակագրություն (1207-1318), էջ 55:

65 Նույն տեղում:

66 Մանր ժամանակագրություններ. հ. I, էջ 37: Իբն ալ-Ասիր, էջ 301:

67 Վրաց ժամանակագրություն (1207-1318), էջ 55:

68 Նույն տեղում, Քարթլիս ցխովրեբա, հ. I, էջ 370 (վրացերեն):

69 Վրաց ժամանակագրություն (1207-1318), էջ 55: Գրիգոր Ակներցի, էջ 20: Իրապատում է Գրիգոր Ակներցին: Մանրամասն տե՛ս Ա. Ի. Շահնազարյան. նշվ. աշխ., էջ 99, ծան. 2:

70 Վարդան վարդապետ, էջ 142: Մանր ժամանակագրություններ. հ. I, էջ 37, 38, հ. II, էջ 137: Քարթլիս ցխովրեբա, էջ 370 (վրացերեն):

71 Իբն ալ-Ասիր, էջ 301, հմմտ. Միրխոնդ, էջ 99:

նահանջում էր[72]: Գեորգի Լաշայի բանակի բաղկացուցիչ մասն էին կազմում Իվանե աթաբեկի, ամիրսպասալար Զաքարեի որդի Շահնշահի և մսախուրթ-ուխուցես Վահրամ Գագեցու զորքերը[73]: Հայ-վրացական բանակի և մոնղոլական ու Ակուշի զորքերի միջև կայացած երկրորդ ճակատամարտի վայրը Իրն ալ-Ասիրը, ալ-Բաղդադին ու Միրխոնդը չեն նշում՝ բավարարվելով նրա ընթացքի մանրամասն կամ թռուցիկ նկարագրությամբ: XIV դարի վրաց Անանուն պատմիչի վկայությամբ ճակատամարտը կայացել է «Բերդուջի, որ այժմ Սագիմ է կոչվում, գետափին», իսկ ըստ Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչի՝ Բալիի ջրի ափին:[74] Կիրակոս Գանձակեցին, մոնղոլների Տփխիսի մատույցները հասնելն արձանագրելով հանդերձ, անտեսել է այս ճակատամարտը և բավարարվել հայ-վրացական և մոնղոլական զորքերի միջև կայացած երրորդ ճակատամարտի հիշատակմամբ: Ինչ վերաբերում է հայկական մյուս աղբյուրներին (Վարդան վարդապետ, Ստեփաննոս եպիսկոպոս, Մխիթար Այրիվանեցի, Անանուն Սեբաստացի), ապա նրանք այս ճակատամարտի վայրը միահամուռ տեղադրում են Կոտման գետի ափին[75]: Ընդ որում, Գրիգոր Ակներցին, մանրամասն անդրադառնալով ճակատամարտի ընթացքին, նշում է, որ այն տեղի է ունեցել «ի դաշտն մեծ, որ կոչի Կոտման, որ կայ առաջի Տէրունական բերդին» և որ Վահրամ Գագեցու զորքի հարձակման հետևանքով «լցավ դաշտն Սագամայ կոտորեալ Տաթարով»[76]: Որ Կոտման = Սադիմ (Բերդուջի) = Սադամ = Զադամ համարժեքությունը կասկածից վեր է, ժամանակին ապացուցել ենք[77]: Այժմ փորձենք ճշտել, թե որն է Բալիի ջուրը (գետը), որի ափին, ըստ Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչի, տեղի է ունեցել այս ճակատամարտը: Դրա համար համադրենք այս ճակատամարտի մասին վրաց պատմիչի, Վարդան վարդապետի և Ստեփաննոս եպիսկոպոսի հաղորդած տեղեկությունները:

Համաձայն Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչի «ինչ որ օտարասերմ զորքեր եկան Սոմխիթ ու Հերեթ և փոքր ինչ վնասվեցին նրանցից: Հետ դարձածներին հասավ (Գեորգի Լաշան–Ա. Շ.) Բալիի ջրի վրա և առաջին վիրավորվելը նրանցից եղավ»:[78] Այս անցքերը Վարդան վարդապետը նկարագրում է այսպես. «Զօր ինչ օտարազգեմ և այլալեզու...եկին մտին յերկիրն Գուգարացւոց, և փութով դառնային: Զորոց հետ մտեալ ամենայն ուժով Լաշն (Գեորգի Լաշան–Ա. Շ.) հասանէ առ գետովն Կոտմանայ».[79] Ստեփաննոս եպիսկոպոսն էլ գրում է. «Զաբա, Սաբա բահատուրն եկն ի Տփխեաց [տու]ննն զՍախոտե ավիրեաց և դար-

72 С. С. Уоркер. Ук. соч., с. 164.

73 Վրաց ժամանակագրություն (1207-1318), էջ 55-56:

74 Նույն տեղում, էջ 56:

75 Վարդան վարդապետ, էջ 142: Մանր ժամանակագրություններ. հ. I, էջ 37: Մխիթար Այրիվանեցի, էջ 80: Մանր ժամանակագրություններ. հ. II, էջ 137: Գրիգոր Ակներցի, էջ 21:

76 Գրիգոր Ակներցի, էջ 21:

77 Ա. Ի. Շահնազարյան. Նշվ. աշխ., էջ 94-99:

78 Քարթլիս ցխովրեբա. հ. I, էջ 370 (վրացերեն):

79 Վարդան վարդապետ, էջ 142:

ձաւ: Զաւրն Վրաց ի հետ գնաց և ի Կոտմանա կոտորեաց և բարձոյ[ց]»[80]: Ինչպես տեսնում ենք, երեք պատմիչն էլ (չհաշված Իբն ալ-Ասիրը) անկախարար տառացիորեն նույն կերպ են ներկայացրել հայ-վրացական և մոնղոլական ու նրանց միացած Ակուշի զորքերի միջև կայացած ճակատամարտին նախորդած իրադարձությունները: Նույնն է նաև մոնղոլական ու Ակուշի զորքերի արշավանքի աշխարհագրությունը՝ Գուդարքը և «Տփխեաց տունը» մտնում էին Սոմխիթի մեջ, որն ընդգրկում է ինչպես Հյուսիսային Հայաստանը, այնպես էլ Հարավային Վրաստանը: Իսկ ինչ վերաբերում է Հերեթին, ապա քանի որ այն Հայաստանի մեջ չէր մտնում, Վարդան վարդապետն անկարևոր համարելով կամ չիմանալով՝ կարող էր չհիշատակել: Հետևաբար, խոսքը նույն ճակատամարտի մասին է, որը վրաց պատմիչը տեղադրում է Բալիի ջրի ափին, իսկ Վարդան վարդապետը և Ստեփաննոս եպիսկոպոսը՝ Կոտման գետի: Եվ քանի որ Կոտման – Սադիմ (Բերդուջի) – Սագամ = Զագամ համարժեքությունը կասկածից վեր է, մնում է պնդել, որ Բալիի ջուրը նույն Կոտման – Սադիմ (Բերդուջի) – Սագամ = Զագամն է կամ դրա մոտակայքով հոսող մի գետ, որի ափին հայ-վրացական զորքը հասավ մարտերով նահանջող հակառակորդին: Նահանջողներն, անկասկած, հիմնականում Ակուշի հրոսակներն էին, որովհետև մոնղոլական գլխավոր ուժերը բանակել էին Կոտմանի դաշտում: Քանի որ հայ-վրացական աղբյուրներին հայտնի չէ մոնղոլական բանակի շարքերում Ակուշի զորքերի կովելը, նրանք ճակատամարտի ընթացքը պարսկա-արաբական աղբյուրներից առաջին հայացքից են այլ կերպ նկարագրում: Այսպես, օրինակ, XIV դարի վրաց Անանուն պատմիչն այս ճակատամարտին անդրադառնալիս նկատում է, որ «թաթարների կեսը փախուստի դիմեց, կեսն էլ դարանակալ եղավ, հետապնդեցին»[81]: Իրականում, սկզբում հայ-վրացական զորքի հետ մարտի մեջ էին մտել Ակուշի հրոսակները, որոնք, չնայած ծանր կորուստներ կրելուն, իրենց խնգիրը հաջողությամբ կատարեցին, այն է՝ մարտերով նահանջելով և հայ-վրացական բանակին զգալի կորուստներ պատճառելով ու հոգնեցնելով հասցրին Կոտմանի դաշտ, որտեղ, ասես դարանում, նրանց սպասում էր մոնղոլական թարմ ուժերով բանակը: Ահա թե ինչպես են նկարագրում այս ճակատամարտը Իբն ալ-Ասիրն ու Միրխոնդը: Նրանցից առաջինը գրում է. « Ակզբում Ակուշը ընգհարվեց նրանց (հայ-վրացական զորքի–Ա. Շ) հետ այն մարդկանցով, որոնք հավաքվել էին իր շուրջը: Սաստիկ կռիվ եղավ, որի ընթացքում երկու կողմերն էլ դիմացան և Ակուշի մարդկանցից շատերը սպանվեցին: Վրա հասան թաթարները, երբ վրացիք արդեն հոգնել էին կռվից: Նրանցից շատերը կոտորվեցին ու չդիմացան թաթարների առջև խայտառակ պարտություն կրելով և ամեն կողմից սրի մատնվելով»: Այս նույն դեպքերի մասին Միրխոնդը հետևյալն է պատմում. «Որտեղով որ նրանք (Ակուշի հրոսակները–Ա. Շ.) անցան՝ ավերեցին և վրացիների ազնվականներից մեծաթիվ մարդիկ մարտերում կոտորվեցին: Եվ հանուն արդարության պետք է ասել, որ մարտերի ընթացքում Ակուշի զորքից էլ շատերը զոհվեցին: Եվ

80 Մանր ժամանակագրություններ. հ. I, էջ 37:
81 Վրաց ժամանակագրություն (1207-1318), էջ 56:

կռվի ընթացքում մոնղոլական հրամանատարները օգնության հասան Ակուշին ու վրացիներին պարտության մատնեցին»[82]:

Այս ճակատամարտը Վարդան վարդապետն ու Գրիգոր Ակներցին համահունչ են նկարագրում, չնայած առաջինը դեպքերը համառոտ է ներկայացնում: Նրանց հաղորդումներից պարզվում է, որ մարտի ընթացքում հայ-վրացական զորքի ձախ թևը ղեկավարում էր Իվանե աթաբեկը, իսկ աջը՝ Վահրամ Գագեցին: Երբ մարտը սկսվում է, Մանասգոմի տեր Համիդոլան «յաղագս քինու ինչ, ջլատեաց զձին Աթաբակ Իւանէի»[83], ինչը շփոթություն է առաջացնում հայ-վրացական բանակի ձախ թևում: Դա նկատելով մոնղոլները կրկնակի եռանդով հարձակվելով ջախջախում են այդ թևը, որը Գեորգի Լաշայի ու Իվանե աթաբեկի հետ փախչում է: Իրադարձությունների հետագա զարգացմանը քաջածանոթ, XIV դարի վրաց Անանուն պատմիչը ուներ բոլոր հիմքերը՝ փաստելու. «Սկսվեց բարձր ու անվանի գավթյան հաղթող գրոչի երջանիկ ճակատագրի անկումը»[84]: Դրան հակառակ, աջ թևում գործող Վահրամ Գագեցին «մինչև յերեկոյն գնաց կոտորելով զՏաթարն յանխնայ յարձակմամբ, մինչև առհասարակ լցաւ դաշտն Սագամայ կոտորեալ Տաթարով»[85]: Ընդ որում, Վահրամ Գագեցու գլխավորած զորքի հարձակումն այնքան սրընթաց էր եղել, որ նա ձախ թևի փախուստի մասին միայն երեկոյան՝ Գարդման հասնելուց հետո է իմանում և խիստ վշտանալով ամրանում Քարհերձ բերդում[86]: Այս ճակատամարտում հայ-վրացական զորքերի կորուստների մասին տվյալներ են պահպանվել Հռոմի պապ Հոնորիոս III-ին Ռուսուդան թագուհու և Իվանե աթաբեկի գրած նամակներում ու ալ-Բաղդադի մոտ: Ռուսուդան թագուհին և Իվանե աթաբեկը կորուստները հաշվում են 6 հազար, իսկ ալ-Բազդադին նշում է, որ սպանվել էին 8 հազար ընտիր մարտիկներ և բազմաթիվ հպատակներ ու գյուղացիներ[87]: Արժանահավատ են այս իրադարձությունների ժամանակակից և դրանք անաչառ ներկայացնող ալ-Բաղդադիի տվյալները, որովհետև Ռուսուդան թագուհին և Իվանե աթաբեկն այս նամակներում հաճախ ցանկալին իբրև իրականություն են ներկայացրել:

Ճակատամարտից հետո մոնղոլներն ու Ակուշի հրոսակները «կողոպտեցին երկրի այն մասերը, որոնք նախապես չէին կողոպտվել» հասնելով Սամշվիլդե[88]: Այսպիսով ասպատակվեցին հայկական շրջանները, որովհետև մոնղոլները Սամշվիլդեից հետ դարձան:

---

82 Իբն ալ-Ասիր, էջ 301: Միրխոնդ, էջ 99:

83 Գրիգոր Ակներցի, էջ 21, հմմտ. Վարդան վարդապետ, էջ 142:

84 Վարդան վարդապետ, էջ 142: Վրաց ժամանակագրություն(1207-1318), էջ 56: Ցու. Սիխարուլիձեն Կոտմանի և Խունանի ճակատամարտերը նույնացնելով ու դրանց ընթացքը միահյուսելով սխալմամբ պնդում է, թե իբր Վահրամ Գագեցու դեմ գործող մոնղոլական զորքը դիտմամբ է նահանջել՝ խնդիր ունենալով կտրել հայ-վրացական բանակի աջ թևը (Ю. М. Сихарулидзе. Ук. соч., с. 17):

85 Նույն տեղում:

86 Գրիգոր Ակներցի, էջ 21-22:

87 Ի. Մ. Տաբաղուա. Նշվ. աշխ., էջ 177, 178 (վրացերեն), Мацне, 1982, N 4, с. 162.

88 Իբն ալ-Ասիր, էջ 301: Վրաց ժամանակագրություն (1207-1318), էջ 56:

Այս ճակատամարտի վայրի տեղադրությունը ևս վիճելի է: Կ. Դ'Օսսոնը, Ռ. Գրուսսեն, Ս. Ուորքերը, Ռ. Կիկնաձեն և Հ. Ստեփանյանը այն տեղադրել են Տփխիսի մոտ, Բ. Շպուլերը՝ Գադի, Վ. Ալենը՝ Խունանի մոտ, իսկ Լ.Բաբայանը՝ Կոտմանի դաշտում, իրավացիորեն հստակ տարբերակելով Կոտմանի և դրանից հետո կայացած Խունանի ճակատամարտերը[89]: Հետազոտողներից ոմանք էլ (Հ. Մանանդյան, Գ. Ալթունյան, Զ. Բունիյաթով, Դ. Մուսխելիշվիլի, Յու. Սիխարուլիձե, Ն. Շոշիաշվիլի, Բ. Ուլուբաբյան) այս և դրան հաջորդած Խունանի ճակատամարտերը նույնացրել են՝ հաճախ մարտադաշտերի տարանունությունը բացատրելով դրանց մերձակայությամբ[90]: Այս պատճառաբանությունն անընդունելի է, որովհետև Կոտմանի = Զադամի և Խունանի – Հունարակերտի դաշտավայրերի «մոտիկությունը» մի քանի տասնյակ կիլոմետրով է չափվում: Բացի այդ, Կոտմանի ճակատամարտը Վարդան վարդապետի հավաստմամբ տեղի է ունեցել Վահրամյանների տիրույթներում[91], մինչդեռ Խունանը երբեք նրանց չի պատկանել[92]:

Հետազոտողները համակարծիք չեն նաև այս ճակատամարտի թվագրության հարցում: Կ. Դ'Օսսոնը, Ռ. Գրուսսեն, Բ. Շպուլերը և Ս. Ուորքերն այն թվագրել են 1221 թ. փետրվարով, Շ. Լըմերսիեն՝ 1221 թ. մարտով, իսկ Հ. Մանանդյանը, Լ. Բաբայանը, Ռ. Կիկնաձեն, Յու. Սիխարուլիձեն և Հ. Ստեփանյանը՝ 1221 թ. հունվարով, հենվելով Իբն ալ-Ասիրի վկայության վրա[93]: Վերջին թվագրությունը լիովին ընդունելի է, քանի որ Իբն ալ-Ասիրն այս շրջանի իրադարձությունները, իբրև ժամանակակից, առավել իրապատում ու անխոցելի ժամանակագրությամբ է ներկայացնում:

Կոտմանի ճակատամարտից հետո մոնղոլներն իրենց ճանապարհին ընկած հայկական շրջանները կողոպտելով՝ վերադարձան Մուղան[94]: Գար-

---

89 К. Д ' О с с о н. Ук. соч., с. 187; R. G o u s s e. L'Empire Mongol, p. 258. С. С. У о р к е р. Ук. соч., с. 164. *Վրաստանի պատմության ակնարկներ. հ. III, էջ 536 (վրացերեն): Հ р а չ Ս տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 34:* B e r t o l d S p u l e r. Op. cit., p. 25; W. E. D. A l l e n. Ук. соч., с. 110; *Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 171:*

90 *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 183, Գ. Ա լ թ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 17,* З. М. Б у н и я т о в. *նշվ. աշխ., էջ 115.* Д. М. М у с х е л и ш в и л и. Из исторической географии Восточной Грузии. Тбилиси, 1982, с. 6–7; Ю. М. С и х а р у л и д з е. Ук. соч., с. 17. *Գ р и г о р Ա к н е р ц ի. Պատմություն ազգին Նետողաց, հրատարակությունը Ն. Շ о շ ի ա շ վ ի լ ու. Թբիլիսի, 1961, էջ 92-93 (վրացերեն): Բ. Ա. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 181-182:*

91 *Վ а р д а н վ а р д а պ е տ, էջ 142:*

92 *Մանրամասն տե՛ս Ա. Ի. Շ а հ ն а զ а р յ а ն. նշվ. աշխ., էջ 91-100:*

93 К. Д ' О с с о н. Ук. соч., с. 188; R. G o u s s e. L'Empire Mongol, p. 258; B e r t o l d S p u l e r. Op. cit., p. 25; С. С. У о р к е р. Ук. соч., с. 162; Ch. L e m e r c i e r - Q u e l q e j a y. Lapaix mongol: Goug thatar ou paix mongol? Flammarion, 1970, p. 9; *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 184: Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 173: Վրաստանի պատմության ակնարկներ. հ. III, էջ 536 (վրացերեն):* Ю. М. С и х а р у л и д з е. Ук. соч., с. 17. *Հ р а չ Ս տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 34: Ի բ ն ա լ - Ա ս ի р, էջ 301:*

94 *Կիրակոս Գանձակեցու համաձայն մոնղոլները «եկին իջին յաչխարհն Աղուանից ի սահմանս Շամքոր քաղաքի», իսկ նրանց քոչերը գտնվում էին Բեղամեջում (Կ ի - р а կ о с Գ а н ձ а կ е ց ի, էջ 202, 203):*

նանը նրանք շարժվեցին դեպի Մարաղա և 1221 թ. ապրիլ–նոյեմբեր ընկած ժամանակամիջոցում գրավեցին, ավերեցին, սրի քաշեցին ու կողոպտեցին Մարաղան, Նախճավանը, Սարաուն, Արդաբիլը, Համադանը, Խոյը, Սալմաստն ու Բայլականը և դրանց շրջակայքը: Թավրիզն ու Գանձակը վրկագնով փրկվեցին[95].

Իբն ալ-Ասիրի վկայությամբ «երբ թաթարները իրենց գործը վերջացրին մահմեդական երկրներում՝ Ատրպատականում և Առանում...շարժվեցին դեպի վրաց (քուրջ) երկիրը...Վրացիք (քուրջերը) նրանց դեմ պատրաստվել էին և մեծ զորք էին հավաքել իրենց երկրի սահմանային կողմերում, որպեսզի թաթարներին արգելեն ներս մտնել»[96]*: Նույնն է հաղորդում Միրխոնդը. «Այս ընթացքում (Գանձակի պաշարման ժամանակ – Ա. Շ.) մոնղոլ հրամանատարներին լուր հասավ, որ վրացիները զորք են հավաքել և պատրաստվում են պատերազմի: Հետևաբար, իրենց ուշադրությունը սևեռեցին նրանց վրա»*[97]*: Ռաշիդ ադ-Դինն իր հերթին սխալմամբ պնդելով, թե իբր մոնղոլները գրավեցին ու լիովին ավերեցին Գանձակը, գրում է, որ «նրանք այդտեղից ուղղվեցին Գուրջիստան [Վրաստան], իսկ նրանք իրենց զորքը [մարտական] կարգի բերելով պատրաստվեցին մարտի»*[98]*: Աղբյուրներում որոշակի տարակարծություն կա, քանի որ ըստ Իբն ալ-Ասիրի ու Միրխոնդի հայ-վրացական կողմը նախօրոք էր զորք հավաքել, իսկ համաձայն Ռաշիդ ադ-Դինի մոնղոլների վրացական թագավորությունն շարժվելուց հետո: Կարծում ենք, որ իրապատում են առաջին երկու պատմիչները, որովհետև վրաց արքունիքին չէր կարող հայտնի չլինել մոնղոլների զորաշարժերի ընթացքը: Եթե Իբն ալ-Ասիրը նկատի ունենար ոչ թե բուն Վրաստանը, այլ վրացական թագավորության արևելյան սահմանագլուխը, ինչպիսին էր Շամքոր քաղաքն իր շրջակայքով*[99]*, ապա հայ-վրացական և մոնղոլական զորքերի հերթական երրորդ ճակատամարտը պետք է տեղի ունենար Վահրամյանների իշխանության մասը կազմող Շամքորի շրջանում: Մինչդեռ, այն տեղի ունեցավ նրանց տիրույթների մեջ չմտնող «ի դաշտավայր տեղիս, զոր Խունանն անուանեն»*[100]*: Հետևաբար, Իբն ալ-Ասիրը նկատի է ունեցել բուն Վրաստանը, քանի որ Խունան–Հունարակերը գտնվել է հայ-վրացական ավանդական սահմանագլխին: Այդտեղ մոնղոլական զորքը կարող էր հասնել Գանձակ-Տփխիս ճանապարհով: Խունանի ճակատամարտում հայ-վրացական բանակի թվաքանակի մասին տեղեկություններ չեն հասել*[101]*: Կիրակոս Գանձակեցին հայտնում է, որ*

---

95 *Նույն տեղում, էջ 302-303, 307:* Р а ш и д а д - Д и н. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 227-228 *(Ռաշիդ ադ-Դինը սխալվում է գրելով, որ Գանձակը գրավվել ու ավերվել է): Հմմտ. Մ ի ր խ ո ն դ, էջ 99-101,* G u v a i n i, t, I, p. 148.

96 *Ի բ ն ա լ - Ա ս ի ր, էջ 303-304:*

97 *Մ ի ր խ ո ն դ, էջ 101:*

98 Р а ш и д а д - Д и н. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 228.

99 *Վրաստանը Ռուսթավելու դաշաշրջանում. Թբիլիսի, 1966, էջ 58 (վրացերեն):*

100 *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 203:*

101 *Կ. Դ'Օսսոնը այս բանակի թվաքանակը 13 հազար է հաշվում* (К. Д' О с с о н. Ук. соч., с. 191), *ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ճակատամարտի ընթացքում նրա տված զոհերի թիվն անհամեմատ շատ էր:*

ճակատամարտի ժամանակ այն գլխավորում էին Գեորգի Լաշան ու Իվանե աթաբեկը, մինչդեռ Իբն ալ-Ասիրի և Միրխոնդի համաձայն Գեորգի Լաշան մնացել էր Տփխիսում[102]: Մարտից առաջ մոնղոլները դիմում են իրենց սիրած գարանի մարտաձևին: Ջեբեն հինգ հազար հոգով դարան է մտնում, իսկ Սուբադայի զորքի մնացած մասով մարտի է ուղարկում: Ըստ Ռաշիդ ադ-Դինի, Սուբադայի զորաբանակը մարտի հենց սկզբից դիտմամբ փախուստի է դիմում, մինչդեռ համաձայն Կիրակոս Գանձակեցու և Միրխոնդի դա կատարվում է հայ-վրացական զորքի ճնշման տակ[103]: Վերջինիս պնդմամբ «առաջին ընդհարման ժամանակ (հայ-վրացական ու Սուբադայի զորքերի – Ա. Շ.) թաթարական զորքը վրացական «հռչակավորներից (ազնաուրներից–Ա. Շ.)պարտվեց ու փախուստի դիմեց և վրացիներն առաջ գալով սկսեցին թալանով զբաղվել»[104]: Կիրակոս Գանձակեցին իր հերթին պատմում է, որ ճակատամարտից հետո մոնղոլները հավաքեցին հայ-վրացական զորքի ավարը և տարան իրենց բանակատեղը («ժողովեալ թշնամեացն զաւար զօրուն տարան ի բանակս յուրէանց»)[105]: Սա հենց այն ավարն էր, որ հայ-վրացական զորքին էր անցել Սուրադայի զորաբանակին հաղթելուց հետո թալանով զբաղվելիս, քանի որ այն սեփական երկրում կողոպուտ արած չէր լինի: Եթե ուսումնասիրողները նկատի ունենային, որ Խունանը երբեք Վահբամյաններին չի պատկանել և Կիրակոս Գանձակեցու այս խոսքերի վրա ուշադրություն դարձնեին ու դրանք համադրեին Միրխոնդի ասածների հետ, ապա դժվար թե Կոտմանի և Խունանի ճակատամարտերի ընթացքը նույնացնեին: Երբ հայ-վրացական բանակը մարտն ավարտված համարելով զբաղված էր թալանով, Ջեբեն դարանից դուրս եկավ, իսկ Սուբադայը հետ դարձավ և նրանք հայ-վրացական զորքը չրջապատելով գլխովին ջախջախեցին սպանելով 30 հազար հոգու, ինչը չափազանցված է թվում[106]: Հայ-վրացական զորքի մնացորդները փախան Տփխիս[107]: Հետազոտողները այս ճակատամարտը թվագրում են 1221 թ. վերջով–1222 թ. ձմեռով[108]: Ընդունելի թվագրությունը 1221 թ. վերջն է, քանի որ մոնղոլները մինչև 1221 թ. նոյեմբեր զբաղված էին Ատրպատականն ու Աղվանքն ասպատակելով, որտեղից էլ անմիջապես մտել են վրացական թագավորություն[109]:

---

102 Կիրակոս Գանձակեցի, էջ 203: Իբն ալ-Ասիր, էջ 304: Միրխոնդ, էջ 101:

103 Рашид ад-Дин. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 228, Կիրակոս Գանձակեցի, էջ 203: Միրխոնդ, էջ 101, Ս Ուորքերը Սուբադայի մարտի մեջ մտած զորագունդը հաշվում է 25 հազար, ելնելով Անդրկովկաս մտած մոնղոլական զորաբանակի թվաքանակն ըստ որոշ աղբյուրների 30 հազար կազմելու մասին տվյալներից (С. С. Уорке р. Ук. соч., с. 167):

104 Միրխոնդ, էջ 101:

105 Կիրակոս Գանձակեցի, էջ 203:

106 Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. Т. II, с. 30. Կիրակոս Գանձակեցի, էջ 203: Միրխոնդ, էջ 101: Իբն ալ-Ասիրն անգամ պնդում է, որ հայ-վրացական զորքից մի հոգու էր հաջողվել փրկվել (Իբն ալ-Ասիր, էջ 304):

107 Միրխոնդ, էջ 101:

108 Լ. Հ. Բաբայան. նշվ. աշխ., էջ 180: Վրաստանի պատմության ակնարկներ. հ. III, էջ 536 (վրացերեն): Հրաչ Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 36 և ուրիշներ:

109 Իբն ալ-Ասիր, էջ 302-303, 307: Միրխոնդ, էջ 99:

Կիրակոս Գանձակեցու «ժողովեալ թշնամեացն զաւար զօրուն՝ տարան ի բանակս իւրէանց»[110] և Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչի «մոնղոլները կանգ առան Պարտավի դաշտում» արտահայտություններից հետևում է, որ ճակատամարտից հետո մոնղոլները վերադարձել էին իրենց հիմնական բանակատեղը՝ Պարտավի և Բելուկանի միջև գտնվող Բեղամեջ կոչվող վայրը[111]: Վարդան վարդապետի համաձայն, 1222 թ. «կամեցան այսրէն դառնալ նոյնք (մոնղոլները – Ա. Շ.), այլ զի գտին դեսպանք նոցա կազմ և հաւաք զՀայս և զՎիրս, և տարեալ զհամբաւն ոչ համարձակեցան գալ, այլ անդրէն դարձեալ գնացին, յո և գնացին»[112]: Նույն է պնդում նրանից օգտված Անանուն Սեբաստացին, հայտնելով, որ 1222 թ. «կամեցաւ Թաթարն դառնալ աշխարհն Վրաց և Հայոց և զի կազմէին զօրք Հայոց և Վրաց ոչ իշխեցին»[113]: Կիրակոս Գանձակեցին իր հերթին նշում է, որ «դարձեալ միւս անդամ զօր ժողովեալ թագաւորին վրաց ևս բազում, քան զառաջինն, կամեցեալ տալ մարտ պատերազմի ընդ թշնամիսն: Իսկ նոցա...կամեցան անցանել ընդ դուռն Դաբբանդայ յաշխարհն իւրեանց»[114]: Այսպիսով, առաջին երկու աղբյուրների համաձայն մոնղոլները վախենալով չեն մտել վրացական թագավորության տարածք, իսկ ըստ վերջինի այդպես են վարվել առանց որևէ պատճառի: Բոլոր դեպքերում, երեք աղբյուրն էլ պնդում են, որ մոնղոլները Խունանի ճակատամարտից հետո նորից վրացական թագավորություն չեն ներխուժել, ինչը իրականությանը չի համապատասխանում: Անդրադառնալով այս դեպքերին, Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց Անանուն պատմիչը գրում է, որ «երկրորդ տարում (1222 թ. – Ա. Շ.) կրկին եկան (մոնղոլները – Ա. Շ.) և կանգ առան Պարտավի դաշտում: Հավաքվեց նրա (Գեորգի Լաշայի – Ա. Շ.) թագավորությունը, միացավ Կարին քաղաքի զորքը և կանգնեց Լոմթա-Գորայի ու Ագարայի միջև: Եվ մինչև վրա հասնելը փախան (մոնղոլները – Ա. Շ.) և փրկվեցին, անցան Դերբենտի ճանապարհը»[115]: Այս հաղորդումը ոչ մի տրամաբանության չի ենթարկվում թեկուզ այն պարզ պատճառով, որ Լոմթա-Գորան այժմյան Մառնեուլն է, իսկ Ագարան գտնվել է այժմյան Ստեփանավանի ենթաշրջանում՝ Լոռե բերդի մերձակայքում[116]: Ինչու պետք է այս բնագծում պաշտպանության անցած հայ-վրացական և նրանց միացած Կաբինի տեր Մուզիս ալ-Դինի զորքերից տասնյակ կիլոմետրերով հեռու գտնվող մոնղոլները փախչեին, երբ հակառակորդն իրենց հետ անմիջական շփման մեջ մտնելու նպատակով որևէ քայլ չէր ձեռնարկում:

---

110 Կիրակոս Գանձակեցի, էջ 203:

111 Քարթլիս ցխովրեբա. հ. I, էջ 370 (վրացերեն):

112 Վարդան վարդապետ, էջ 142:

113 Մանր ժամանակագրություններ. հ. II, էջ 137.

114 Կիրակոս Գանձակեցի, էջ 203:

115 Քարթլիս ցխովրեբա. հ. I, էջ 370 (վրացերեն):

116 Ագարայի տեղագրության մասին տե՛ս Հ. Գ. Մարգարյան. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր. Երևան, 1980, էջ 168-175:

Լոմթա–Գորա–Ադարա բնագծում Գեորգի Լաշայի զորքերի կանգ առնելը մտածել է տալիս, որ մոնղոլները ոչ թե Պարտավի դաշտում (–Բեղամեջում) կայանած էին, այլ մտել էին երկիր և շարժվում էին առաջ: Դա վրաց արքունիքին ստիպել էր հակառակորդի առաջխաղացումը կասեցնել հենց այս բնագծում, որի հաղթահարման դեպքում մոնղոլները Լոռե–Սամշվիլդե–Դմանիս–Տփխիս ճանապարհով անարգել ոչ միայն բուն Վրաստան կմտնեին, այլև Տփխիսին իրական վտանգ կսպառնար, ինչն անտեսել չէր կարելի մինչ այդ մոնղոլների Սամշվիլիդե հասնելը հաշվի առնելով[117]: Այս պնդումը հաստատվում է Իբն ալ-Ասիրի պատմածով, ըստ որի Խունանի ճակատամարտից հետո Գեորգի Լաշան նոր զորախմբեր է ուղարկում մոնղոլների դեմ, որպեսզի խափանի երկրի կենտրոնական մասերը նրանց մտնելը: Սակայն դա նրանց չի հաջողվում, և նրանք երկիրը դատարկելով վերադառնում են Տփխիս[118]: Այս պայմաններում վրաց արքունիքին մնում էր մոնղոլների ավերածություններին ենթարկվող շրջանները հակառակորդի ոգորմածությանը հանձնելով գոնե հոգալ բուն Վրաստանի և Տփխիսի անվտանգությունը, ինչը և արվում է՝ Լոմթա–Գորա–Ադարա բնագծում պաշտպանության անցնելով: Սակայն մոնղոլական բանակի առաջխաղացումը, որն ուղեկցվում էր կոտորածով, կողոպուտով ու ավերածությամբ, հակառակորդի հետ զինական բախմամբ չավարտվեց: Իբն ալ-Ասիրի խոսքով ասած՝ «իրենց ուղածն արած» մոնղոլները, «տեսնելով, որ երկիրը շատ կիրճեր ու լեռնանցքներ ունի, չհամարձակվեցին խորքերը թափանցել ու ետ դարձան: Վրացիների սիրտը մեծ վախ ընկավ»[119]: Միրխոնդն էլ մոնղոլների հետ քաշվելը բացատրում է ճանապարհների անանցանելիությամբ, ավելացնելով, որ «վրացիների վրա թաթարական գորքը մեծ սարսափ էր տարածել»[120]: Իսկ ալ-Բաղդադին, որն այս իրադարձությունների ժամանակ Կաբինում է եղել, Կաբինի տիրող զորքի հայ-վրացական բանակին օգնության հասնելը հաստատելով՝ դրում է. «Մարդիկ սկսեցին խոսել, որ նրանք (մոնղոլները – Ա. Շ.) այլևս չեն վերադառնա: Բայց երբ վրացիների հզորությունը մեծացավ, թաթարներն առանց որևէ տեսանելի պատճառի ու վտանգի հեռացան....Դա եղավ [վեց հարյուր] տասնութ թվին (=25 II. 1221 թ-14. II. 1222 թ.)»[121]: Այսպիսով, պարսկա-արաբական աղբյուրները թույլ են տալիս պնդելու, որ Խունանի ճակատամարտից հետո ևս մոնղոլները 1222 թ. սկզբին ներխուժել են վրացական թագավորության տարածք՝ նպատակ ունենալով հասնել երկրի կենտրոնական շրջանները, բայց հետ են քաշվել ոչ թե հակառակորդի հետ բախումից երկյուղելով, այլ իրենց բնորոշ զգուշավորություն դրսևորելով: Ցպետք է մոռանալ, որ նրանց նպատակները ոչ թե նվաճողական էին, ինչպես կարծել է Մ.Պերշերոնը[122], այլ՝ հետախուզական, ինչը հաջողությամբ կատարել էին: Վերն ասվածի լույ-

117 Վրաց ժամանակագրություն (1207-1318), էջ 56:
118 Իբն ալ-Ասիր, էջ 304:
119 Նույն տեղում:
120 Միրխոնդ, էջ 101:
121 Мацне, 1982, N 4, с. 162.
122 M. Percheron. Gengis-Khan. Paris, 1962, p. 155.

սի տակ Կ. Դ'Օսսոնն ու Վ. Ալենը միանգամայն իրավացի են, գտնելով, որ մոնղոլները կրկին վերադարձան, բայց հայ-վրացական կողմը չհամարձակվեց նրանց մարտ տալ, իսկ մոնղոլներն իրենց հերթին զգուշանալով չխորացան երկրի խորքերը[123]: Հետևաբար, Յու. Սիխարուլիձեն վրիպել է, պնդելով, թե իբր հայ-վրացական (ըստ նրա՝ վրացական) զորքերը հետապնդել ու Գանձակի մոտ հաղթել են մոնղոլներին, որոնք այնուհետև հեռացել են Մուղանի իրենց ձմեռանոցը[124]: Իրականում, այդպես էլ չհաղթված մոնղոլները վրացական թագավորությունից մտան Շիրվան և պաշարեցին նրա մայրաքաղաք Շամախին: Այն գրավելուց ու ավերակույտի վերածելուց հետո նրանք անցան Հյուսիսային Կովկաս և ճանապարհին հանդիպած բոլոր տեսակի արգելքները հեշտությամբ հաղթահարելով՝ հասան հայրենիք, լիովին ու սահմանված ժամկետում կատարելով իրենց տիրակալի առաջադրանքը[125]: Այսպիսով, թիկունքից կտրված փոքրաթիվ այս զորաբանակը գլխովին ջախջախեց իրեն դիմադրելու փորձ կատարած բոլոր ուժերին՝ մահ, կողոպուտ ու ավեր սփռելով իր ճանապարհին ընկած մեծ ու փոքր բնակավայրերում և դրանց շրջակայքում:

РАЗВЕДЫВАТЕЛЬНЫЙ ПОХОД МОНГОЛОВ В ЗАКАВКАЗЬЕ (1220 – 1222 гг.)

АРТАШЕС ШАХНАЗАРЯН

Резюме

Разведывательный поход монголов (1220 – 1222 гг.) в Закавказье – одна из примечательных страниц векового военно-политического содружества армянского и грузинского народов. Этот поход давно привлекает внимание исследователей, что объясняется не только той отрицательной ролью, которую он сыграл в жизни народов Закавказья, но и тем, что противоречивость сообщений источников не позволяет точно воспроизвести реальной картины событии, происходящих в это время. Сопоставительный анализ армяно-грузинских и персидско-арабских источников показывает, что в этот период между армяно-грузинскими и монгольскими войсками произошло три битвы. Первая из них имела место в начале января 1221г. на юго-восточной окраине Арцах-Хачена,

---

123 К. Д ' О с с о н. Ук. соч., с. 191-192; W. A l l e n. Op. cit., p. 110. *Ի դեպ, զարմանալի է, երբ Հ. Ստեփանյանը գրում է. «Հազիվ թե մոնղոլների դեմ կրկին ճակատամարտելու նպատակով գնացած հայ-վրացական նոր ու ավելի մեծ բանակը հանդիպեր թշնամուն և առանց մարտի մեջ մտնելու ետ դառնար, մի բան, որ ընդունվել է Կ. Դ'Օսսոնի կողմից» (Հ ր ա չ Ս տ ե փ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 140): Իրականում Կ. Դ'Օսսոնը գրել է. «Շտապ հավաքվեց նոր բանակ, որպեսզի երկրի հենց սրտում կասեցնի մոնղոլների հաջողությունները: Բայց այդ զորքերը բարբարոսների ներշնչած վախով համակված, չհամարձակվեցին նրանց սպասել և վերադարձան Թիֆլիս»* (К. Д ' О с с о н. Ук. соч., с. 191):

124 Ю. М. С и х а р у л и д з е. Ук. соч., с. 18.

125 *Ի բ ն ա լ - Ա ս ի ր, էջ 304-306, 307: Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 203-204:* Р а ш и д а д - Д и н. Сборник летописей. Т. I, кн. 2-я, с. 228 – 229.

вторая — в конце января 1221 г., на берегу реки Котман=Сагим (Бердуджи)=Бали, а третья — в конце 1222 г. на Хунаском = Нунаракертском поле. Во всех трех битвах победили монголы. Это в первую очередь обьясняется феодальными междоусобицами, имевшими место в грузинском государстве, и тем, что несмотря на все старания грузинского двора, так и не удалось найти союзников против монголов.

THE RECONNAISSANCE CAMPAIGN OF MONGOLS TO TRANSCAUCASIA (1220–1222)

ARTASHES SHAHNAZARYAN.

S u m m a r y

The struggle of the Armenian and Georgian peoples against the reconnaissance campaign of the Mongols (1220–1222) to Transcaucasia is one of the most prominent pages of their centuries old military cooperation. This problem was discussed by scholars since long, and is a vital issue not only because of the negative effect of that campaign on the life of Transcaucasian peoples; but also due to the fact that the contradictory character of historical sources does not permit us to reconstract the real picture of the events. The investigation of Armenian-Georgian and Persian-Arabic sources shows that during the campaign three battles had taken place between Armenian-Georgian and Mongol armies – 1) in early January 1221 along the sourth-eastern borders of Artsakh-Khachen, 2) in late January 1221 on the bank of Kotman=Sagim (Berduji)=Bali river, 3) in late 1222 on the Khunan=Hunarakert field. In all three battles the Mongols had won. This shoud be explained by the presence of feudal strifes in the Georgian elite and the failure of the attempts of the Georgian court to find allies against the enemy.